ԱՍՅԱ
ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

ԱԶԳԱՅԻՆ
ԿԱՌԱՎԱՐԻՉՆԵՐԻ
ՎԻՐՏՈՒԱԼ ԱԿԱԴԵՄԻԱ

ՀՈԳԵՎՈՐ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅՈՑ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱԳԱՆ

ԱՍՅԱ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

ՀՈԳԵՎՈՐ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅՈՑ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱԳԱՆ

Ամենը ձեզ, իսկ ինձ միայն բաժին թողեք
Դժոխքներով անցած «Հայր մեր»-ը:
Արթուր Մեսչյան

Գյումրի

2023

Տպագրության է երաշխավորել՝
Աշխարհաժողովի նախաձեռնող խումբը

Գիտական ղեկավար՝ աշխարհագրական գիտությունների թեկնածու, դոցենտ՝ Արմեն Ներսիսյան
Գրախոս՝ քաղաքագիտության դոկոտոր, պրոֆեսոր՝ Մարիամ Մարգարյան

Կիրակոսյան Ա.
Հոգևոր անվտանգությունը և հայոց պետականության ապագան /Ա. Կիրակոսյան 40 էջ/:

Մենագրությունը ԱԿՎԱ-ի (Ազգային կառավարիչների վիրտուալ ակադեմիայի) առաջին՝ ազգընկալ մակարդակի պաշտպանիչ թեզն է:

Մենագրությունում առաջին անգամ մշակվել է բանաձև, որի միջոցով վերլուծվել է հոգևոր անվտանգության ֆունկցիոնալ բաղադրիչները ու դրանց հստակ փոխգործակցությունը տարածաժամանակային ռեալ տիրույթում:

Ընդ որում, հետազոտական խնդիրը դիտարկվել է ժամանակակից համակարգային ճգնաժամից ածանցվող հոգևոր-ոգեղեն ճգնաժամի պատճառահետևանքային կապերի ու դրանց հաղթահարման տեսանկյունից:

Առանձին հետազոտական խնդիր է հանդիսացել նաև հակաարարչական ու արարչական համակարգից բխող գոյարժեքային ընտրության դիտարկումը, որպես ազգային մատրիցային վերադառնալու ճանապարհ: Ըստ այդմ հետազոտությունն ամբողջացվել է ճգնաժամի հաղթահարման համար առաջարկվող ոգենորոգչական դարաշրջանի մեկնարկման մեր տեսլականը:

Հետազոտության արդյունքները կարող են կիրառվել ինչպես տեսական-ակադեմիական ոլորտում՝ համապատասխան գիտական բանավեճի և հետազոտական նոր ուղղությունների համար, այնպես էլ գործնական կիառման համար:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ ----------5

ԳԼՈՒԽ 1

ՀՈԳԵՎՈՐ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ----------7

1.1 Հոգևոր անվտանգությունը ազգային անվտանգության ապահովման համատեքստում----------7

1.2 Հայաստանում աղանդների տարածման տարածաժամանակային դրսևորումները----------16

ԳԼՈՒԽ 2

ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԹՈՒԹՅԱՆ ԱՊԱԳԱՆ ----------25

2.1 Գոյաարժեքային մակաբուծային զարգացման սցենար ----------26

2.2. Գոյաարժեքային արարչական զարգացման սցենար ----------29

ՎԵՋԱԲԱՆ ----------35

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ----------37

ՆԱԽԱԲԱՆ

Մասնագետների բնորոշմամբ, Համամարդկային քաղաքակրթության ներկա հանգրվանը բնորոշվում է եռաչափ ճգնաժամերի աննախադեպ ընթացքով: Թերևս այս գերճգնաժամի պատճառներից մեկը հոգևոր-ոգեղեն ճգնաժամն է: Յուրաքանչյուր պետության և տարածաշրջանի համար առաջնային նշանակություն ունի անվտանգությունը, այն բազմակոմպոնենտ հասկացություն է, որում առանցքային նշանակություն ունի հոգևոր անվտանգությունը: Հոգևոր անվտանգության (այսուհետ ՀԱ) միջոցով են գործառվում ու փոխառվում անվտանգության բոլոր բաղադրիչները: Հիմք ընդունելով Մ. Մարգարյանի տեսակետը՝ հոգևոր անվտանգության մաս կազմող կրոնական գիտակցությունը տարբեր կերպ է անդրադառնում անհատի և հասարակության կյանքի զարգացման վրա: Այն կարող է լինել և՛ կայունության հիմք, և՛ բարձր բարոյականության և մարդասիրության հենակետ, և՛ միաժամանակ հակամարտության պատճառ:

Վերոնշյալը ընդհանրացնում է հետազոտական աշխատանքի արդիականությանն ու այժմեականությանը ներկայացնող պահանջները և միաժամանակ բացահայտում՝ հետազոտության նպատակը: Այն է բացահայտել հոգևոր անվտանգության դերը ազգային անվտանգության ապահովման համատեքստում, վերլուծել նրա համակարգաստեղծ բաղադրիչների կապը ռեալ տարածաժամանակային տիրույթում:

Նպատակին հասնելու համար դրվել և լուծվել են հետևյալ հետազոտական խնդիրները.

- Ներկայացնել հոգևոր անվտանգության մասին ընդհանուր պատկերացումներն ու տեսակետները:
- Սահմանել ՀԱ-ն էությունը,
- Մշակել ՀԱ բանաձև, որը մաթեմատիկորեն պետք է ապացուցի ՀԱ արգումենտների ռեալ տարածաժամանակային գոյությունն ու փոխկապակցվածությունը ազգային անվտանգության բաղադրիչների հետ,
- Վեր հանել ՀԱ ապահովման սպառնալիքները՝ դիտակետում ունենալով աղանդավորական կառույցները,
- Ուսումնասիրել աղանդավորական կառույցների գործունեության պատճառահետևանքային կապերը և տարածաժամանակային դրսևորումները:

- Ներկայացնել երիտասարդների դերը Հայաստանի հոգևոր անվտանգության ապահովման գործում, ինչպես նաև, նրանց հոգևոր անվտանգությանը սպառնացող գործոնները:
- Բացահայտել երիտասարդության գոյարժեքային ընտրության (Արարչական ու հակաարարչական համակարգի) լիագումարով պայմանավորված ապագայի կառուցակազմման մոդելի բովանդակությունը:

Առաջադրված խնդիրների վերլուծման համար օգտվել ենք վիճակագրական, վերլուծության, համադրման, տեսական ընդհանրացման և համեմատաաշխարհագրական գիտական մեթոդներից:

ԳԼՈՒԽ 1. ՀՈԳԵՎՈՐ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ

1.1 ՀՈԳԵՎՈՐ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Ներկա աշխարհաքաղաքական պայմաններում տեղի ունեցող իրադարձությունները մեկնաբանվում են որպես աշխարհի նոր վերաբաժանման արդյունք, որն արտահայտվում է համընդհանուր ու համակարգային ճգնաժամով: Վերը նշվածը նկատելի է հասարակական կյանքի կազմակերպման բոլոր ոլորտներում: Տեղի ունեցող աշխարհաքաղաքական, աշխարհատնտեսական և աշխարհամշակութային վերափոխումները ուղղված են՝ գլոբալիստական Աշխարհակարգի ձևավորմանը (արժեքների համահարթեցմանը): Ժամանակի մարտահրավերները ուղղված են ազգային բարոյաարժեքային համակարգի նպատակային ոչնչացմանը:

Առկա ճգնաժամի պատճառահետևանքային կապերի և բովանդակության բացահայտումը հնարավորություն կտան կանխել նրա կործանարար ազդեցությունը: Երբ հասարակությունը դիտարկվում է որպես մեկ ընդհանուր համակարգ և ամբողջի մաս, ուստի և նրա առանձին բաղադրիչների ախտահարումը կհանգեցնի ողջ օրգանիզմի քայքայմանը: Հետևապես՝ հիվանդ է ողջ հասարակությունը:

Ստեղծված ապարժեք քաոսի գլխավոր պատճառներից մեկը՝ *հոգևոր-ոգեղեն ճգնաժամն է*: Նյութականի գերակայությունը հոգևոր-ոգեղեն առաջնահերթության նկատմամբ ծնում է նյութապաշտություն, հոգևորի ստորադասում, որը և պատճառ է հանդիսանում անհատի, սոցիալական խմբերի և ողջ հասարակության մեջ հոգևորի ու նյութականի հավասարակշռության խախտման համար: Այսօր համատարած նկատելի է գերնյութականացում, գերսպառողականություն, գերգռեհկացում և դրանց հետևանքով գերպարզունակություն: Սրանց հանրագումարման արդյունքում մարդկային գիտակցության մեջ ձևավորվում է նյութականի գերակայություն՝ հոգևոր-ոգեղեն առաջնահերթության նկատմամբ: Այսինքն վտանգված է մեր *հոգևոր անվտանգությունը:*

Մասնագետների դիտարկմամբ, տիրող քաղաքակրթական խոր ճգնաժամից դուրս գալու համար գործնականում սպառվել են 21-րդ դարի առկա զինանոցի ողջ գործիքակազմերը: Ուստի և ճգնաժամը հնարավոր

չէ հաղթահարել այն աշխարհաճանաչողության հիմքի վրա, որը ծնել է հենց այդ ճգնաժամը։

Ստեղծված արհեստածին ճգնաժամից բխող հակաարարչական համակարգի մակաբուծային զարգացումների դիմադարձման համար առաջնային նախապայման ենք դիտարկում էթնոպաշտպանական մեխանիզմների գործարկումը։ Այն իրենից ներկայացնում է ազգային ավանդական արժեքների պահպանումն ու արդիականացումը, որով և արդիականացվում են սեփական էթնոսի պահպանման տարածաժամանակային դրսևորումները։ Ուստի այս հրամայականով մեր հետազոտական ընթացքը բխեցվելու է՝ ազգային անվտանգության, ինքնության, հոգևոր անվտանգության պահպանման գերկարևոր նպատակադրումներով։ Այս դիտակետից կարևոր է ապահովել՝ ազգային անվտանգությունը։

Ազգային անվտանգության խնդիրները գիտատեսական ուսումնասիրության առարկա են դարձել XX դարի երկրորդ կեսից, թեև խնդրակարգի առանձին հասկացությունների պարզաբանումն ավելի հին պատմություն ունի։ Հարկ է նշել, որ գոյություն ունեն «անվտանգություն» հասկացության սահմանման տարբեր մոտեցումներ։ Որոշ հեղինակներ անվտանգությունը սահմանում են մարդկանց, հասարակության, պետության, ժողովուրդների, համաշխարհային հանրության վտանգների և սպառնալիքների բացահայտման (հետազոտության), կանխարգելման, թուլացման, վերացման և դիմադարձման, գործունեության կատեգորիայի միջոցով[1]։

Անվտանգությունն արդեն իսկ առօրյա գիտակցության մեջ զուգորդվում է ինչ-որ բանի կամ ինչ-որ մեկի արտաքին և ներքին սպառնալիքներից պաշտպանվածության հետ։ Այն կարող է ներկայացվել որպես ֆունկցիա, որի փաստարկներն են՝ ա) պաշպանվածությունը և բ) սպառնալիքը։ Հետևաբար, որքան մեծ է սպառնալիքը, այնքան ուժեղ պետք է լինի պաշտպանվածությունը[2]։

---

[1] Серебрянников В., Дерюгин Ю., Ефимов Н., Ковалев В., Безопасность России и армия. М. 1995, стр 213

[2] Рыбаков Н.С., Безопасность как защищенность // Проблемы национальной безопасности России в XX – XXI вв. Уроки истории и вызовы современности: материалы международной научно-практической конференции. Краснодар, 2010. С. 413-414.

Ըստ Վ. Միտրոխինի տեսակետի՝ «անվտանգության հայեցակարգը պետք է ներառի անհատի, սոցիալական խմբերի արժեքները, պետությունը, հասարակությունը և ընդհանրապես քաղաքակրթությունը և նրանց արժանապատվության պաշտպանության աստիճանը»[3]: Ժամանակակից իրականությունում պետության սուբյեկտիվ տարածքի կարմիր գծերը հատվում են ոչ միայն ավանդական՝ ռազմական հակամարտությունների միջոցով, այլև ստանալով բոլորովին նոր ձև ու բովանդակություն, որոնք հատուկ են ներկայիս հիբրիդային պատերազմներին, ներթափանցում ու կործանում են գործող համակարգը:

Ազգային անվտանգությունը ինքնին բարդ ու բազմաբովանդակ կառուցվածք ունի: Ազգային անվտանգության դեմ ուղղված սպառնալիքներն են՝ պետության, հասարակության, ընտանիքի և անհատի գոյության դեմ ուղղված, դրանց հիմքերը խարխլող կամ հեռանկարային վտանգ ներկայացնող երևույթները, գործողություններն ու անգործությունը[4]:

Ելնելով հասարակության կենսագործունեության առանձնահատկություններից՝ ազգային անվտանգության կառուցվածքում կարելի է առանձնացնել հետևյալ տեսակները՝

- Ֆիզիկական անվտանգություն,
- Ռազմական անվտանգություն,
- Քաղաքական անվտանգություն,
- Տնտեսական անվտանգություն,
- Սոցիալական անվտանգություն,
- Ժողովրդագրական անվտանգություն,
- Էներգետիկ անվտանգություն,
- Պարենային անվտանգություն,
- Տեղեկատվական-հաղորդակցային անվտանգություն,
- Գիտատեխնիկական-կրթական անվտանգություն,

[3] Зеркалов Д. В., Духовная безопасность, Киев,2012, с.4.

[4] ՀՀ ազգային անվտանգության ռազմավարություն, 2007 թ, https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=31189 Ասյա Կիրակոսյան (վերջին մուտք՝ 23.07.2023)

• Հոգևոր անվտանգություն[5]:
•ԵՎ այլն

Անվտանգության վերոնշյալ բաղադրիչների մասին կան հստակ ձևավորված պատկերացումներ և պարզ է նրանց գործառույթները: Մեզանում թերի է ըմբռնված հոգևոր անվտանգության էութենական և ֆունկցիոնալ բաղադրիչները: Հասարակության մոտ կա թյուր կարծիք, ըստ որի հոգևոր անվտանգությունը նույնականացում են միայն կրոնական գործոնի հետ: Իհարկե, կրոնական գործոնը այստեղ առանցքային նշանակություն ունի, բայց այն համադրվելով տարաբնույթ բաղադրիչների հետ կազմում է բարդ համակարգ:

Հոգևոր անվտանգության սահմանման երեք հիմնական մոտեցում կա՝ **ավանդական**, **սոցիալական** և **քաղաքական**:

Ավանդական մոտեցման շրջանակներում հոգևոր անվտանգությունը դիտարկվում է որպես՝ անհատի, հասարակության և պետության հոգևոր անվտանգության պաշտպանություն՝ արտաքին և ներքին սպառնալիքներից:

Սոցիալական մոտեցման շրջանակներում հոգևոր անվտանգությունը դիտարկվում է որպես՝ ազգային անվտանգության բաղադրիչ: Վերջինիս միջոցով ամբողջացվում է անհատի, հասարակության և պետության փոխհամագործակցությունն ու բնականոն կենսագործունեությունը, որն արտացոլում է ազգային կենսակերտվածքի մշակութային և բարոյահոգեբանական նկարագիրը:

Քաղաքագիտական մոտեցման շրջանակներում Հոգևոր անվտանգությունը սահմանվում է որպես.

1) Անհատի, հասարակության և պետության հոգևոր կենսական պահանջների և կարիքների բավարարում:

2) Հասարակական հարաբերությունների համակարգ անհատ սուբյեկտների միջև, որը նպաստավոր պայմաններ է ապահովում առողջ հոգևոր կյանքի և հոգևոր զարգացման համար:

Եթե ավանդական մոտեցմամբ ուշադրությունը կենտրոնացված է որոշակի ռիսկերի, մարտահրավերների և սպառնալիքներից պաշտպանվելու վրա, ապա սոցիալական և քաղաքագիտական

[5] Կիրակոսյան Ասյա, Հոգևոր անվտանգությունը՝ որպես ազգային անվտանգության ապահովման նախապայման, ՀԵՀ ուսանողական գիտաժողով, 2023թ:

մոտեցման մեջ, առաջին հերթին, հոգևոր անվտանգությունը հենվում է որոշակի ներքին վիճակի վրա, որը որոշվում է դրա բաղադրիչների (արգումենտների) փոխազդեցությամբ, ինչը պետք է ապահովի այս համակարգի բնականոն կենսագործունեությունը, ինչպես նաև ամբողջ հասարակության գործունեությունը և զարգացումը անկախ որոշակի սպառնալիքների առկայությունից:

Ապագայում արդյունավետ հոգևոր անվտանգության ապահովելու համար անհրաժեշտ է ներդաշնակորեն զարգացնել այս երեք ոլորտները[6]:

Ունենալով բարդ կառուցվածք *հոգևոր անվտանգությունը,* որպես ազգային անվտանգության բաղադրիչ բնութագրում է հասարակության կենսակերտվածքի, պատմության և մշակույթի ավանդույթները, հասարակության բարոյաքաղաքական միասնության մակարդակն արտացոլող ազգային ինքնագիտակցության պաշտպանվածությունը, ինչպես նաև, առանց ազգային ինքնագիտակցությանը ու ինքնությանը վնաս պատճառելու՝ իր առաջադիմական զարգացման համար անհրաժեշտ նոր արժեքներ և գաղափարներ ընդունելու ազգի կարողությունը[7]:

Ըստ մեր տեսակետի՝ Հոգևոր անվտանգությունը (ՀԱ) օբյեկտիվ իրականության և սուբյեկտիվ գիտակցության մեջ գոյություն ունեցող համակարգ է, որը արտահայտվում է ազգային ինքնագիտակցության արժեհամակարգային ու արժեզոյաբանական ինքնաիրացումով, հիմք հանդիսանալով հասարակության առողջ բարոյահոգեբանական զարգացման ու ստեղծարար համագործակցության համար:

Հարկ է նշել, որ *Ազգային ինքնագիտակցությունը (ԱԻ)-ն* ներառում է ազգի ծագումը, զարգացումը, ազգային հոգեկերտվածքն ու պատմական հիշողությունը, ազգային սիմվոլներն ու սոցիոմշակութային ժառանգությունը, ինչպես նաև քաղաքական ինքնակազմակերպման և

---

[6] https://cyberleninka.ru/article/n/duhovnaya-bezopasnost-v-sovremennom-rossiyskom-obschestve-nekotorye-teoreticheskie-i-prakticheskie-aspekty/viewer

[7] Չիլինգարյան Դ.Ս, Երզնկյան Ե.Լ., Պաշտպանական-անվտանգային տերմինների բացատրական հայերեն-ռուսերեն-անգլերեն, ռուսերեն-հայերեն, անգլերեն-հայերեն մեծ բառարան, Երևան, 2015, էջ 741

ինքնակառավարման արժեքային համակարգի այն հիմնարար բնութագրիչները, որոնք ձևավորում են քաղաքական ազգը[8]:

Հոգևոր անվտանգությունը բազմաչափ ու բազմակոմպոնենտ համակարգ է, բաղկացած մի շարք համակարգաստեղծ բաղադրիչներից: Այդ համակարգաստեղծ բաղադրիչներն են՝ ծագումնաբանությունը (Ծ), լեզվամտածողությունը(Լ), հավատքը(Հ), մշակույթը(Մ), պատմական հիշողությունը (Պ):

Հիմք ընդունելով մեր առաջարկած սահմանումը կարող ենք հոգևոր անվտանգությունը բանաձևել՝

ՀԱ= ԱԻ (Ծ × Լ×Հ × Մ × Պ)

Այստեղից էլ կարող ենք առանձնացնել Հոգևոր անվտանգության (ՀԱ) արգումենտները

ՀԱ= ԱԻ ($X_{Ծ}$ × $X_{Լ}$ × $X_{Հ}$ × $X_{Մ}$ × $X_{Պ}$)

Այսպիսով, հոգևոր անվտանգությունը ներկայանում է որպես ֆունկցիա կախված համակարգաստեղծ բաղադրիչներից՝ արգումենտներից: Բանաձևում յուրաքանչյուր արգումենտ ունի իր հստակ տեղն ու գործառույթը, որոնք հստակ են նաև իրականության մեջ՝ տարածաժամանակային ռեալ արտահայտմամբ: Քանի որ բանաձևում արգումենտների արտադրյալ է ներկայացված, ապա նրանք գտնվում են փոխկախվածության մեջ, որն արտահայտվում է երկակի բնույթով:

<u>Առաջին փոխկախվածությունն</u> արտահայտվում է արժեքների մեծությամբ: Յուրաքանչյուր արգումենտ որպես արտադրիչ, ունի իր արժեքը, հետևաբար, որքան բարձր է այդ արժեքը, այնքան բարձր է ընդհանուր արժեքը: Այսինքն՝ ՀԱ-ն որպես արտադրյալ, ուղղակի կախման մեջ է գտնվում իր արտադրիչների (համակարգաստեղծ բաղադրիչների) արժեքից: Որքան բարձր են դրանք, այնքան հզոր է ազգային ինքնագիտակցությունը (ԱԻ) և ընդհակառակը՝ նրանց թուլությունը (ցածր արժեքը) նվազեցնում է ազգային ինքնագիտակցության ներուժը:

---

[8] Մարգարյան Մ. «Երիտասարդության քաղաքական սոցիալականացումը՝ որպես ազգային ինքնության արդիականացման գործընթաց: Հոգևոր անվտանգություն», «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, 2018 թ 3(97) համարում, 66-79 էջ:

Երկրորդ փոխկախվածությունը պարտադրում է արգումենտների ռեալ գոյություն, քանի որ նրանցից յուրաքանչյուրի բացակայությունը միաժամանակ փաստում է ընդհանուր արտադրյալի բացակայությունը, ցանկացած արտադրիչ, եթե զերո է, ապա ողջ արտադրյալն է զերո դառնում:

Ամբողջացնելով կարող ենք արձանագրել, որ հոգևոր անվտանգությունը ազգային անվտանգության ապահովման հիմքն է: Նրա միջոցով են գործառվում անվտանգության համակարգի քաղաքական, տնտեսական, տեղեկատվական, ռազմական և այլ բաղադրիչները: Առանց հոգևոր անվտանգության ապահովման հնարավոր չէ վերոհիշյալ շղթայի լիարժեք գործարկումը: Ասվածը կարող ենք ներկայացնել հետևյալ բանաձևի միջոցով.

ԱԱ=ՀԱ(Xաբ)

Ըստ Ս. Հանթինգթոնի, եթե ազգը պատրաստ չէ պատասխանելու մարտահրավերներին, անորոշությամբ հղի մեծ շեղումով փոփոխվում է նրա հոգևորի արժեքային առանցքը (միջուկը), որի պատճառով ազգը կա՛մ կորցնում է իր ինքնությունը և ձուլվում, կա՛մ դրսևորում է արդիականանալու քաղաքական կամք՝ իր քաղաքակրթական ինքնատիպությունը կենսունակ (մրցունակ) պահելու նպատակով, կա՛մ էլ պարբերաբար հայտնվելով անորոշությունների մեջ՝ չի կարողանում ինքնակազմակերպվել իր անփոփոխ միջուկի շուրջ հանուն ժողովրդավարական համախմբման:[9] Ինչպես տեսնում ենք, ազգային ինքնության գիտակցված և բնականոն արդիականացումը ազգ-պետության կառուցման և ամրապնդման համար հզոր ռազմավարական ռեսուրս է: Ավելին, նրա անտեսումը խոչընդոտում է ազգային անվտանգության հիմնախնդիրների, հատկապես հոգևոր անվտանգության ապահովմանը:

Սամանենք, որ եթե Մայր Հայաստանը մեր բնօրրան մայր-հայրենիքն է, ապա Հոգևոր Հայաստանը՝ մեր հոգևոր-հայրենիքը: Հետևապես, որքան որ կարևոր է պահպանել Մայր Հայրենիքի ֆիզիկական անվտանգությունը, նույնքան էլ գերկարևոր է ապահովել

[9] Մարգարյան Մ. «Երիտասարդության քաղաքական սոցիալականացումը՝ որպես ազգային ինքնության արդիականացման գործընթաց: Հոգևոր անվտանգություն», «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, 2018 թ 3(97) համարում, 66-79 էջ:

Հոգևոր Հայրենիքի անվտանգությունը[10]: Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության աշխարհագրական դիրքով պայմանավորված մշտական արտաքին և ներքին սպառնալիքները՝ ուղղված ազգային անվտանգությանը, առաջնային նախապայման ենք համարում ազգի բարոյական, հոգևոր միասնության և համախմբվածության, ինչպես նաև ազգային ինքնության ու ինքնուրույնության պահպանման և արդիականացման ապահովումը: Ներկա ճգնաժամը հնարավոր է հաղթահարել միայն կուռ համակարգով, իսկ դա՝ հայերիս պարագայում պետք է արտահայտվի հայոց ազգային եկեղեցու ու քրիստոնեական վարդապետության շուրջ նույնականացմամբ, ինչը անընդհատորեն դրսևորվում է այս 1700 տարիների ընթացքում: Կարող ենք հստակ ամրագրել, որ Հայ Առաքելական հավատքից դուրս՝ ցանկացած այլ դավանաբանական ձև կարող է ոչ միայն խաթարել հայ համակեցության լիարժեքությանն անհրաժեշտ մտածելակերպի և կենցաղավարության հիմքերը, այլև զրկել քաղաքակրթական ինքնատիպությունից: Որպես աքսիոմա պետք է դիտարկել պետություն-եկեղեցի-հասարակություն անքակտելի եռանկյունու («երրորդության») լիարժեք փոխհամագործակցությունը:

Պատմության հազարամյա փորձը ցույց է տվել, որ հայոց եկեղեցին մշտապես կանգնած է եղել պետության կողքին, իսկ պետականության կորստի ժամանակ դարձել հայության ինքնության և ազգապահպանության միակ երաշխիքը:

Հայկական առաքելական եկեղեցին, որին պատմության տևական ընթացքում վերապահված էր ազգային ինքնության պահպանման կարևորագույն գործառույթը, հաճախ հանդես է եկել որպես ազգային աշխարհաքաղաքական պատկերացումների մշակման, իրացման գլխավոր սուբյեկտ: Ավելին՝ տարածաշրջանում անընդհատ ծավալվող աշխարհաքաղաքական գործընթացների համար այն հանդիսացել է նաև ազդեցության հիմնական օբյեկտ, քանի որ ազգի ձուլման գլխավոր ճանապարհներից մեկը նրա հոգևոր տիրույթի ոչնչացումն է:

Հայաստանի պատմության մեջ, մեկ անգամ չէ, որ հասարակությունը բախվել է հոգևոր անմիաբանության, սոցիալական

---

[10] Ներսիսյան Արմեն, Մակարյան Էդգար, Արարչական Կենսականոնագիր, Գյումրի, 2022, էջ-23:

արժեքների և հոգևոր մշակույթի ճգնաժամի, ինչը կրկին օրակարգ է դնում հոգևոր անվտանգության ապահովման հարցերը։

Այսօր հայկական պետության ու հասարակության առջև ծառացած աշխարհաքաղաքական մարտահրավերներն արտահայտվում են հետևյալ իրողություններով՝

• աղանդավորների պրոգրեսիվ աճով,
• հայկական մշակույթի օտարացմամբ,
• հայկական ընտանիքի բարոյալքմամբ[11]։

Մեր համոզմամբ ազգային անվտանգության հիմնական խնդիրներն ու սպառնալիքներն են՝

• Հոգևոր արժեքների իմաստազրկումը և նյութականի պաշտամունքը,
• Հայրենասիրության, ազգային դաստիրակության անկումը,
•Հանդուրժողականության քողի տակ՝ պարտվողական տրամադրությունների ամրագրումը,
• Պետական կառավարման համակարգի նկատմամբ անվստահությունը,
• Ներքին բևեռացումը,
• Ընտանիք ինստիտուտի խարխլումը
• Հայոց Առքելական Եկեղեցու դերի ու նշանակության նվազեցումը, անտեսումն ու մեկուսացումը
•Հայկական ավանդական, հոգևոր, մշակութային և բարոյական արժեքների քայքայումը,
• Ժողովրդագրական բացասական միտումները
• Ազգային արժեքների իմաստազրկումը (մոռացության մատնում),
• Ծայրահեղ նորարարական արժեքների տարածումը (այլընտրանքային ընտանիք, դավանանք, անպատասխանատու ազատություն),
• Աղանդավորական շարժումների լայնածավալ տարածումը,
• Համասեռամոլության և այլ այլասերությունների, սրբապղծությունների բացահայտ քարոզն ու խրախուսումը
• Կրթության որակի անկումը (հայոց լեզվի դերի նվազումը, պատմության կեղծումը կամ աղավաղումը)
• Ստեղծագործական ներուժի նվազումը
•Տեղեկատվության շահարկում (ապատեղեկատվություն, մանիպուլյացիա, մեդիաաղբ և հեռուստաատելություն),
• Եվ այլն։[12]

---

[11] Ներսիսյան Արմեն «Հայաստան աշխարհաքաղաքական մեծ խաղատախտակում», Վանաձոր «Սիմ տպագրատուն» ՍՊԸ, 2013 թ 307 էջ:

1.2 ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՂԱՆԴՆԵՐԻ ՏԱՐԱԾՄԱՆ ՏԱՐԱԾԱԺԱՄԱՆԱԿԱՅԻՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ:

Հայաստանի և հայության համար, երբ սոցիալ-քաղաքական համակարգի կերպափոխումը հղի է տարաբնույթ անորոշություններով, երբ արմատապես փոխվել է ինքնության արդիականացման արտաքին միջավայրը, հոգևոր անվտանգության ապահովման հիմնախնդրի ուսումնասիրությունն ունի և գիտատեսական, և գործնական նշանակություն[13]:

Հայ հասարակության բարոյահոգեբանական ներկայիս խորը ճգնաժամի պատճառները պայմանավորված չեն միայն վերը թվարկված գործոններով, սակայն դրանք այն ոլորտներն են, որոնց վերաարժևորման և վերականգնման համար առաջնային է ազգային եկեղեցու դերակատարումը: Ազգային աշխարհաքաղաքական ներուժի կենսունակությունն ապահովելու տեսանկյունից եկեղեցին հանդես է գալիս որպես կարևորագույն դերակատար, ակտոր և միաժամանակ անդրազգային կազմակերպությունների գլխավոր թիրախը, որոնց վերջնանպատակը՝ տարածքի ու բնակչության տոտալ վերահսկողությունն է: Ազգային եկեղեցու ուծացումը կհանգեցնի ազգային անվտանգության վերջնական կազմաքանդմանը, որին և ուղղված են անդրպետական կառույցների առկայությունն ու գործունեությունը՝ ի դեմս աղանդների: Խնդրո առարկան կդիտարկենք միայն աղանդների գործունեության պատճառահետևանքային կապերը և տարածաժամանակային դրսևորումները ուսումնասիրելով:

<u>Աղանդ</u>՝ առաջացել է լատներեն secta - դպրոց, ուսուցում, sequor - հետևել բառերից: Աղանդն ընդդիմադիր հոսանք, ուսմունք կամ դավանանք է համաշխարհային այս կամ այն կրոնում: Աղանդը շեղում է հիմնական կամ պաշտոնական դավանանքից և հաճախ հակադրվում է դրան: Աղանդի հետևորդները կոչվում են աղանդավորներ. դրանք մարդկանց (հավատացյալների) խմբեր են, որոնք անջատվել են

---

[12] ՀԱ-ի խնդիրների ու սպառնալիքների ախտորոշման համար օգտվել ենք Մ. Մարգարյանի տեսակետից:

[13] Մարգարյան Մ. «Երիտասարդության քաղաքական սոցիլականացումը՝ որպես ազգային ինքնության արդիականացման գործընթաց: Հոգևոր անվտանգություն», «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, 2018 թ 3(97) համարում, 66-79 էջ:

ավանդական եկեղեցուց և չընդունելով նրա դավանանքի որոշ կետեր կամ դավանանքն ամբողջությամբ, քարոզում են իրենց առաջնորդի կողմից առաջ քաշած գաղափարները[14]:

Ըստ Ա. Լ. Դվորկինի «աղանդը փակ կրոնական խումբ է, որն իրեն հակադրում է երկրի կամ տարածաշրջանի հիմնական մշակույթ ձևավորող կրոնական համայնքին»[15]:

Հանրաբար *աղանդների* գործունեության նպատակը՝ բաժանումն է: Այս ուղղությամբ առավել խորքային ուսումնասիրություններ կատարել ենք նախորդ հոդվածներում:[16] Ճիշտ կլինի հիշել հնագույն իմաստությունը ՝ <u>բաժանիր, որ տիրես:</u>

Աղանդները հանդիսանում են քաղաքական անկլավներ, տոտալիտար, քայքայիչ տարր պետության ներսում: Աղանդները նույն ֆունկցիան են կատարում՝ քայքայել ազգային ինքնությունն ու ինքնագիտակցությունը: Չխորանալով նրանց դավանաբանական և կրոնական դոգմաների մեջ (խնդիրը մեր հետազոտական աշխատանքի տրամաբանությունից դուրս կթողնենք՝ հրավիրելով կրոնագետների ուշադրությունը) կփաստենք, որ աղանդավորական կազմակերպությունները և անդամները բացի իրենց վերագրված կրոնական- հոգևոր գործունեությունից ներգրավված են համակեցական բոլոր ոլորտներում՝ քաղաքական, տնտեսական, սոցիալական, ֆինանսական, հրատարակչական, կրթական, ինչպես նաև զբաղվում թվացյալ «բարեգործությամբ»:

Աղանդավորական շարժումները քրիստոնեական եկեղեցու կյանքում նոր երևույթներ չեն: Ժամանակակից աղանդները հիմնականում սկզբնավորվել են ԱՄՆ-ում և Եվրոպայում: Այսպես, օրինակ.

Հիսունականներ կամ հոգեգալստականներ. աղանդն առաջացել է ԱՄՆ-ում XIX դարի վերջին – XX դարի սկզբին: Հայաստանում զանազան

---

[14] Այվազյան Հովհաննես, «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Հայկական հանրագիտարան հրատ., Երևան, 1200 էջ:

[15] Дворкин А. Л. Сектоведение. Тоталитарные секты. Опыт систематического исследования. — М.: Христианская библиотека, 2007. — 816 с. Д. В. Зеркалов, Духовная безопасность, Киев,2012, с.4.

[16] Կիրակոսյան Ասյա, Հոգևոր անվտանգության սպառնալիքները ազգային անվտագության համատեքստում, ԱրՊՀ ուսանողական գիտաժողով, 2023թ:

անուններով գործում են հիսունականների տարատեսակ խմբեր՝ Կյանքի խոսք, Ավետարանական հավատի քրիստոնյաներ և այլն:

Կյանքի Խոսք. Աղանդը հիմնադրվել է 1990 թվականին: 1993 թվականին այն գրանցվել է ՀՀ կառավարությանն առընթեր կրոնի գործերի պետական խորհրդում՝ համաձայն ՀՀ Գերագույն խորհրդի կողմից 1991 թ-ին ընդունված «խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» օրենքի[17]: 2000 թվականին վերագրանցվել է ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրում: Աղանդի ավագ հովիվը Արթուր Սիմոնյանն է, ով հանդիսանում է նաև Հայաստանի «ամբողջաավետարանական եկեղեցիների համագործակցության» համանախագահը:

«Կյանքի Խոսք» աղանդի գործունեության ավելի քան 15 տարիների ընթացքում շուրջ 40 տեղական «եկեղեցիներ» են հիմնել Հայաստանում և արտերկրում: Աղանդը միսիոներական գործունեություն է ծավալում Կովկասում, Ռուսաստանում, ԱՄՆ-ում, Եվրոպայի և մերձավորարևելյան տարածաշրջանի մի շարք երկրներում: Սերտ միջեկեղեցական կապեր են գործում ինչպես Հայաստանի, այնպես էլ ԱՊՀ-ի, Եվրոպայի, ԱՄՆ-ի, Մերձավոր Արևելքի երկրների ավետարանական շարժի եկեղեցիների միջև: Աղանդում գործում են ավելի քան 35 ծառայություններ (բաժիններ): Շեշտադրված աշխատանք է իրականացվում սոցիալական, հեռուստատեսային ավետարանչական, կրթական, հրատարակչական, կալանավայրերի, հաշմանդամների, պատանեկաերիտասարդական, մշակութային և այլ ծառայությունների ոլորտներում: 2003թ-ին աղանդը հիմնել է 7x70 հեռուստաստուդիան: Այժմ հեռուստաալիքը հեռարձակվում է նաև ռուսերեն, այն կարելի է դիտել TSH-Россия արբանյակային ալիքով և ITN կաբելային հեռուստակայանով:

Եհովայի վկաներ կամ եհովականներ. բողոքական աղանդ է, հիմնադրել է Չառլզ Ռասելը 1872թ-ին ԱՄՆ-ի Փենսիլվանիա նահանգում: Մասնագետների կարծիքով Եհովայի վկաների Աստվածաշնչում՝ ուղղադավան թարգմանությունների հետ համեմատած, հաշվառվել են 1200 զգալի դավանաբանական փոփոխություններ: Եհովայի վկաները

[17]https://www.arlis.am/documentview.aspx?docid=82&fbclid=IwAR3NaALW5Y_n83CoH-mYwVclXTpuO27Zrgyxw4W9joDYJnbEhu3aIZAA2fo

մերժում են պետությունը, մշակույթը, ազգային և ավանդական արժեքները, ընտանեկան արժեքները, տոները, հիշատակության օրերը։ Դրանք համարելով «Սատանայի աշխարհի» մաս։ Եհովայի վկաների հետևորդները մինչև այժմ համոզված են, որ զենք չվերցնելը քրիստոնեության դրսևորման բարձրագույն ձևն է։ Եհովայի վկաները, գտնվելով պատերազմական երկրներում լրջագույն վտանգ են ներկայացնում ռազմական անվտանգություն տեսանկյունից։ Եհովականները քարոզում են զենք չվերցնելու և չծառայելու գաղափարը, հրաժարվում պարտադիր զինծառայությունից։ Հատկանշական է, որ Յեհովայի վկաների ակտիվությունը հատկապես մեծացել է 2020 թվականի պատերազմական և հետպատերազմական շրջանում։

Մորմոններ. աղանդը ստեղծել է Ժոզեֆ Սմիթը 1830 թ-ին ԱՄՆ-ում։ Նրանց շարքերում հաշվվում է մոտ 6 միլիոն անդամ։ Մոտավոր տվյալներով նրանք ունեն 50.000 գործունյա անդամներ, որոնք զբաղվում են՝ մորմոնականության տարածմամբ։ Մորմոնների ներխուժումը Հայաստան սկսվեց 1988 թվականից հետո։ Պաշտոնապես աղանդը Հայաստանում ճանաչվել է 1994 թվականի դեկտեմբերի 22-ին։ Այժմ Հայաստանում կա ավելի քան 3000 անդամ։ Մորմոն միսիոներների մեծ մասը երիտասարդներ են 19–26 տարեկանի սահմաններում։ Աղանդը իր առանձին կառույցներն ունի Երևանում, Գյումրիում, Վանաձորում, Արտաշատում, Աշտարակում, Արարատում, Չարենցավանում, Ալավերդիում և այլ բնակավայրերում։ 1998-ից սկսած աղանդը եռանդուն գործել է «ՎՕՍ բարեգործություններ» կազմակերպության միջոցով։

Ռազմական անվտանգություն տեսանկյունից մտահոգիչ է այն հանգամանքը, որ մորմոններն իրենց «եկեղեցիները» հիմնում են ՀՀ ռազմական կարևորագույն օբյեկտների տարածքներում։ Օրինակ՝ Գյումրիում, Արտաշատում, Վանաձորում դրանք զորամասերից հեռու են ընդամենը մի քանի տասնյակ մետր։ Խնդրին իրազեկ անձինք համոզված են, որ նրանց նպատակը ռազմական անհրաժեշտ տեղեկատվություն հայթհայթելն է։

Հայաստանում աղանդների գործունեության վերլուծությունն իրականացնելիս կհիմնվենք մեր կողմից առաջարկվող ներքոհիշյալ բրգաձև կառուցվածքի վրա (Գծապատկեր 1)։

Գծապատկեր 1. Հայաստանում աղանդների տարածման տարածաժամանակային դրսևորումները



Ներթափանցում: Խորհրդային ժամանակաշրջանում ձևավորված աթեիզմի հետևանքով թուլացել էր հասարակության հոգևոր-գիտակցական իմունիտետը, որի պատճառը քրիստոնեական ուղղադավ (առաքելական և ուղղափառ) եկեղեցու կենսագործունեության խաթարումն էր: Այս ամենը պարարտ հող հանդիսացավ աղանդների ներթափանցման համար: Նման պայմաններում հասարակությունը ի վիճակի չեր դիմադարձելու ժամանակի մարտահրավերներին ու սպառնալիքներին: Չնայած պետական հստակ քաղաքականությանը, այնուամենայնիվ, որոշ աղանդավորական կազմակերպություններ հաջողեցին ճեղքել երկաթե վարագույրը և քողարկված գործունեություն ծավալել:

Այս փուլին բնորոշ են՝ աղանդավորական փոքրաթիվ խմբերի ներհոսքը Հայաստան: Հայաստանում մինչև 1987 թվականը աղանդավորական կազմակերպություններ գրեթե գոյություն չունեին: Դրանց ներթափանցումը սկսվեց 1988 թվականի Սպիտակի երկրաշարժից հետո: Աղանդավորական կառույցների թիվն այդ ժամանակ երկուսն էր: Թեպետ Հայասատանում գերակշռում է հիմնականում արևմտյան հոսքը՝ Եվրոպայից և ԱՄՆ-ից, այնուամենայնիվ քիչ չեն նաև մեզանում արևելյան՝ ռուսական, չինական, կորեական, պարսկական ու ղազախական աղանդները:

Հայաստանի տարածքում «*Եհովայի վկաները*» գործում են 1975 թվականից: Պաշտոնապես կազմակերպությունը գրանցվել է՝ 2004 թվականին, 15 անգամ մերժում ստանալուց հետո: Միաժամանակ ԱՄՆ-ի պետական դեպարտամենտն իր հաշվետվություններում պարբերաբար քննադատում էր Հայատանին, համարելով կրոնական փոքրամասնությունների նկատմամբ խտրականություն իրականացնող:

Մորմոնական առաջին միսիոներները Հայաստան են եկել 19-րդ դարի վերջին: Պատմական Արևմտյան Հայաստանի տարածքում հիմնվել էին աղանդի ճյուղեր, որոնք գործել են մինչև Առաջին Աշխարհամարտի սկիզբը: 1991-ին միսիոներները կրկին եկան Հայաստան և պաշտոնապես՝ որպես կրոնական կազմակերպություն ճանաչվել է 1994 թվականի դեկտեմբերի 22-ին:

Արևելյան ուղղություններից կարող ենք հիշատակել Հայաստանում հաստատված մոլոկաններին: Նրանք հիմնականում ապրում են Լոռու մարզում, մասնավորպես՝ Տաշիր քաղաքում, իսկ ավելի վաղ՝ Վորոնցովկա, Ֆիալետովո գյուղում, ինչպես նաև Գեղարքունիքի մարզի Ճամբարակ քաղաքում: Անկախությունից հետո սկսվեց

մոլոկանների արտագաղթ դեպի Ռուսաստան, որի հետևանքով նրանց թիվը Հայաստանում զգալիորեն նվազեց։

Զարգացում։ Այս փուլի մեկնարկը սկսվեց ԽՍՀՄ-ի փլուզումից հետո։ Աղանդների ակտիվ գործունեությունն ու տարածումը Հայաստանում սկսվել են 1988 թվականի Սպիտակի ավերիչ երկրաշարժից հետո՝ բարեգործական ծրագրերի և այլ պատրվակների քողի ներքո։ Մինչ այդ գործող աղանդների թիվը երկուսն էր։ Աղանդների տարածման գլխավոր պատճառը բացատրվում է բնակչության թերկրթվածությամբ և սահմանափակ մտածողությամբ, ազգային ինքնագիտակցության ցածր մակարդակով, կրոնի, պետության և ազգի գոյատևման գաղափարներին մասամբ և բացարձակ անտեղյակությամբ։ Երկրորդ գլխավոր պատճառը սոցիալական գործոնն էր, որից օգտվում են աղանդավորական կազմակերպությունների գերակշռող մեծամասնությունը և բարեգործական օգնությունների տեսքով, մարդկանց ներգրավվում են իրենց շարքերը։

Կայացում։ Այս փուլով բնորոշվում է Հայաստանի նորանկախացման շրջանում նոր իրավական դաշտի ձևավորմամբ։ Թերևս իրենց բնորոշ ճարպկության արդյունքում՝ բավականին կարճ ժամանակահատվածում հաջողվեց Հայաստանի Հանրապետության իրավական դաշտում բավականին նպաստավոր պայմաններ ստեղծել՝ ի շահ աղանդների գործունեության խթանմանը։ Խոսքը վերաբերում է 1991թ ընդունված «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին օրենքին»։ Օրենքում առկա թերությունների, աղանդ և կրոնական կազմակերպություն հասկացությունների չտարանջատման, կրոնական կազմակերպությունների պարտականությունների չմատնանշման և չվերահսկման հետևանքով այժմ աղանդների թվակաքանակը աճում է երկրաչափական պրոգրեսիայով։

Այսպիսով, 2013 թվականի տվյալներով Հայաստանում պաշտոնապես գրանցվել են կրոնական 64-ը կազմակերպություն, որոնցից 51-ը՝ աղանդավորական են, մոտ 200-ից ավելին ՝ չգրանցված։ Ըստ «Ազգային և Հոգևոր արժեքների պաշտպանության ճակատ» ՀԿ-ի տվյալների աղանդավորների թիվը անցնում է 350.000-ը, տարեկան միջինը 5000-ից 7000 մարդ անդամակցում է աղանդներին։ Կրոնական կազմակերպությունները հատկապես խիտ են բաշխված Երևանում ու սահմանմերձ շրջաններում։

Հարցումներ են անցկացվել Երևանում և ՀՀ մի քանի մարզերում 8357 մարդու շրջանում՝ պարզելով, որ հարցվածների միայն 56,37 %-ն է առաքելական եկեղեցու հետևորդ, կաթոլիկ և ուղղափառ եկեղեցու հետևորդ է 1,95 %-ը, «Կյանքի խոսք» աղանդի հետևորդ՝ 24,4 %, «Եհովայի վկա» աղանդի հետևորդ՝ 9,8 %, հեթանոս է հարցվածների 0,16 % և այլն:[18]

Հարկ է նշել, որ աղանդավորական կառույցներն ունեն իրենց բացահայտ կամ գաղտնի կրթական համակարգերը: ՀՀ-ում աճել է աղանդավորական գրախանութների թիվը, կրկնապատկվել «կրոնական» գրքերի տպագրական ծավալը: Այս ամենին զուգահեռ, աղանդավորական կառույցների կողմից տարիներով կատարված ինտենսիվ աշխատանքների հետևանքով հաջողվեց «Հայոց եկեղեցու պատմություն» առարկայի ուսուցումը դուրս հանել հանրակրթական դպրոցից:

Ինքնաիրացում (ողջ համակարգի ոչնչացման վտանգով) Ուսումնասիրելով Հայաստանում աղանդների տարածման օրինաչափությունները, կարող ենք ասել, որ այն շուտով կհասնի իր կրիտիկական սահմանագծին: Աղանդավորները կազմում են Հայաստանի (ՀՀ և ԼՂՀ) ընդհանուր բնակչության 15%-ը, այնինչ ողջ աշխարհում աղանդները բնակչության 1-2%-ն են կազմում: Թվաքանակի արհեստական ուռճացումը տանում է համակեցական համակարգի քայքայմանն ու ինքնաոչնչացմանը: Նման ցուցանիշը մտահոգիչ է և ազդակ է հանդիսանում, որ պետական մարմինները անհապաղ զբաղվեն այս խնդրով, այլապես նման դինամիկ զարգացումներն ու պետական անգործությունը մեր երկրում էլ կհանգեցնեն ու կծնեն նոր «Արաբական գարուն»: որը հանդիսանալու է յուրահատուկ ազդակ ձևավորվող ճգնաժամային քաոսից նոր ծնվող կարգերի համար: է

Նման քաոսը արտահայտվելու է համակեցական կառուցվածքի խորքային ճգնաժամով, որի հաղթահարման համար անհրաժեշտ է յուրահատուկ ազդակ՝ ծնվող նոր կարգերի հաստատման համար: Մեր դիտարկմամբ (կանխատեսմամբ) այդ նորի կայացումը ենթադրելու է ազգային եկեղեցու դերի վերարժևորում, հոգևորի գերակայություն և առաջնորդություն ու բարոյական ու արժեքային համախմբվածություն: Ճգնաժամերը հաղթահարելի են հասարակական նպատակաուղղված գործունեության շնորհիվ: Վերջինիս շարքին դասվում են

[18] https://www.aravot.am/2014/01/21/424352/

հեղափոխությունները, բարեփոխումները և նորարարությունները, որոնցից յուրաքանչյուրը ենթադրում է ինքնատիպ սցենար։

Ի մի բերելով ՀՀ ժողովրդավարական անցման գործընթացը՝ փաստենք, որ պետության, հասարակության և ազգի հոգևոր անվտանգության սպառնալիքները սկզբում, գուցե չեն գիտակցվում, բայց որոշակի փուլում դառնում են անշրջելի[19]։

Արձանագրենք, որ մենք մեր գլխավոր պարտությունը նախ և առաջ կրում ենք հոգևոր դաշտում, որին հաջորդում է ֆիզիկական պարտությունը և այս հաջորդականությամբ փլուզվում է ողջ համակեցական կառույցը։

[19] Մարգարյան Մարիամ, Մովսիսյան Մարինե, Հոգևոր անվտանգությունը որպես ազգային և քաղաքացիաիրավական ինքնության փոխհարաբերությունների գործոն, Էջմիածին, 2021, էջ 78։

ԳԼՈՒԽ 2. ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՊԱԳԱՆ

«Երիտասարդությունը նորոգում է մարդկությունը»:
ԴԵՐԵՆԻԿ ԴԵՄԻՐՃՅԱՆ

Հասարակության հոգևոր անվտանգությունը ազգային անվտանգության բանալին է, իսկ երիտասարդությունը՝ ազգի շարժիչ ուժը: Հասարակության հոգևոր վիճակը անհնար է բնութագրել առանց երիտասարդներին որպես սոցիալ-ժողովրդագրական խումբ ուսումնասիրելու: Երիտասարդությունն է, որ իրեն նետված մարտահրավերների պայմաններում վերարժևորում է անցյալ-ներկայի մասին ընդհանուր պատկերացումները և մշակում անվտանգ ռազմավարական ապագայի տեսլականը: Երիտասարդությունը ներկայացնում է հասարակության ապագան և որոշում ազգի ներուժն ու դրա հետագա զարգացումը:

Այսօրվա երիտասարդությունը մարդկության պատմության մեջ ամենամեծ սերունդն է, որը կազմում է 2 միլիարդ մարդ: Հետևապես, մեր մոլորակի ապագան բառի բոլոր իմաստներով կախված կլինի նրանից, թե այսօրվա երիտասարդությունը արժեշահային, գոյարժեքային ինչպիսի սցենար կընտրի. ապարժեքային, մակաբուծային ու գերգռեհկացված կեղծ իրականություն, թե՞ արարչական, ոգեղեն ու ստեղծարար ապագա: Ուստի և նրանց ընտրության լիագումար ամբողջացումով էլ պայմանավորված կլինի.

• Ինչպիսի՞ իրականություն կարարվի 21-րդ դարում և 3-րդ հազարամյակում
•Ինչպիսի՞ պետություն կստեղծվի
• Ինչպիսի՞ ազգ-հասարակություն կձևավորվի
• Ինչպիսի՞ մարդ-անհատականություն կկերտվի
• Մարդու և հայի ինչպիսի՞ նկարագրով (կյանքի ինչպիսի՞ իմաստով ու նպատակով, անձնային ու ազգային ի՞նչ առաքելությամբ) [20]:

[20] Ներսիսյան Արմեն, Մակարյան Էդգար, Արարչական Կենսականոնագիր, մատյան առաջին, Գյումրի, 2022, էջ 31:

Այս ենթագլխում մենք կքննարկենք գոյարժեքային երկու ուղղությունները՝ հակաարարչական (մակաբուծային) և Արարչական, ընդ որում առաջինը արդեն իսկ ռեալ տարածաժամանակային հարահոսում ակնհայտորեն դրսևորվում է իր սատանայական գունապնակի ողջ սպեկտրով՝ մարդատյաց, քայքայիչ ու կործանարար բովանդակությամբ։

2.1 ԳՈՅԱԱՐԺԵՔԱՅԻՆ ՄԱԿԱԲՈՒԾԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՍՅԵՆԱՐ

Ներկա տոտալ ապարժեքության մեջ համատարած դրսևորվում է գերնյութականացում, գերսպառողականություն, գերգռեհկացում և դրա հետևանքով գերպարզունակություն։ Հասարակության մեջ արդեն արմատացած է ոգեղեն-գաղափարական սնանկություն, տգիտություն, հոգևոր-բարոյականի փոխարեն՝ համընդհանուր բարոյազրկություն և հոգևորի մերժում, մարդկային գոյության իմաստի ու աստվածային նախասահմանվածության խեղաթյուրում և ինքնակործան գեղոնիզմի՝ հաճույքամոլության քարոզ ու դրա տարածում։ Թվարկվածներից յուրաքանչյուրը մանրաքննին դիտարկելիս կհանգրվանենք այն մտքին, որ ստեղծված ապարժեքության պատճառը Աստվածամերժությունն է, Արարիչ-Աստծո նախասահմանված կամքից հեռացումը և մերժումը։ Հետևապես, սղվում է նաև Արարչի արարչագործության արդյունք՝ մարդու արժենշանակությունը, փոփոխվում է նրա կյանքի գոյաբանական իմաստն ու առաքելությունը։ Ահա ժամանակակից արհեստածին քաոսի ախտորոշումը։

Ստորև կներկայացնենք Աստվածամերժության հետևանքով անձնային-անհատական, հասարակական-համակեցական և ողջ մոլորակի վրա ձևավորված նյութապաշտական դրսևորումները։

Մեր ամենամեծ վտանգը՝ սպառնալիքը, գալիս է գլոբալիզմի ու նեոլիբերալիզմի այլասերված բարքերից՝ ընդդեմ Աստծո, մարդու, ընտանիքի, ազգային տեսակի ու ինքնության։ Ժամանակակից քարոզչամեքենաների միջոցով հեշտությամբ կտրվում են այն բոլոր հանգույցները, որոնք կապում են սեփական ինքնության հետ։ Մեկնարկվում է *նեոֆաշիստական թվային ստրկության ապաքաղաքակրթությունը*։ Արևմուտքի խորքային ուժերը համակարգային գերճգնաժամի պատճառով, մեկը մյուսի հետևից կործանարար հարվածներ են հասցնում իրենց ենթակա ու կամակատար

թունավոր քաղտեխնոլոգիաներով: Սրանք գաղափարական զենքեր են, պարզ գործիքներ, որոնք ուղղված են անձնային և ազգային բարոյաարժեքային համակարգի նպատակային ոչնչացմանը և կարող են հեշտությամբ անձին և ազգին տանել ուծացման:

Այս ամենն առաջին հերթին կամարտահայտվում է հանրային գիտակցության ապագաղափարականացմամբ. նախ ներմուծում են կեղծ արժեքներ, մանիպուլացնում, ապա քայքայում են ազգային և հոգևոր արժեքները, շարունակելով կերպափոխումային տրամբանությունը՝ մարդուն իր ազգային հավաքական նկարագրից խեղելով, անջատելով ազգային արժեքներից, կլանելով ազգային նկարագրին խորթ գաղափարներով՝ մարդ անհատին ատոմիզացնում են՝ զրկելով նրան իր սոցիոմշակութային միջավայրից և լիրաժեք սոցիալականացման հնարավորությունից: Այժմյան ՀՀ-ում, մեր ազգակեցական կյանքում տեղի է ունենում օտարարժեք շաբլոնների՝ ձևանմուշների պատճենահանում, առանց սեփական էության-ինքնության ճանաչողության ու ինքնագիտակցության, իմաստավորման ու նպատակայնության՝ որպես ինքնահոսի մատնված կրավորական ինտրեցիա (տանում են ազգային ինքնության ու արժեքների դեգրեդացիայի, որից էլ բխում է ազգային ինքնագիտակցության ու արժեքային համակարգի արգումենտների զերոյացումը[21]): Անընդհատ խմորումների հետևանքով դոմինանտ է դառնում «ԵՍ»-ը «ՄԵՆՔ»-ի փոխարեն, ձևավորվում է ամբողջապես պայթեցված հասարակական գիտակցություն ու հասարակություն, որոնց բեկորներն անկանոն շրջադարձված են: Այս ամենի հանրագումարման արդյունքում գոյանում է նյութապաշտ, եսակենտրոն, անհագ սպառողական, մորթապաշտ ու հարմարվողական սերունդ՝ ազգային ու ավանդական արժեքներին անհաղորդ: Ներկա հասարակությունը գլորվել է դեպի տգետ ու մոլագար ամբոխի կարգավիճակ, որի գերնպատակը օուրվելյան անասնաֆերման է:

Նման հոգևոր, բարոյական և արժեբանական ցածր մակարդակ ունեցող հանրությունը կունենա համապատասխան կրթություն և գիտություն, որը տվյալ ժամանակաշրջանի շնչին բնորոշ, սպասարկելով իր պատվիրատու հակահամակարգին, կվերարտադրի, էլ ավելի

[21] Ներսիսյան Արմեն, Մակարյան Էդգար, Արարչական կենսականոնագիր, Գյումրի, 2022, էջ-206:

ապարժեքություն և էլ ավելի կխորացնի ճգնաժամերը։ Այսինքն ստացվում է՝ լրիվ հակառակ գործընթացի փակ շղթա։ Իսկ այժմյան ՀՀ-ում գործող բոլոնյան կրթահամակարգը էլ ավելի է արմատախիլ անում համակարգային ու խոր մտածողությունը։ Դրանով իսկ հասարակությանը և մասնավորապես երիտասարդությանը մատուցվում է կեղծ իրականություն, որը փաթեթավորելով մարդու իրավունքների, ազատությունների ու քաղաքակիրթ աշխարհայացքի ձևավորման քողի տակ՝ բացարձականացնում են այդ ազատությունը՝ հիմնարար դարձնելով <u>անպատասխանատու ազատությունը</u>։ Այս համատեքստում կարող ենք հստակ ամրագրել, որ ազատությունը առանց հակակշռող «բեռի»՝ պատասխանատվության, վերածվում է <u>սանձարձակության</u>։

Նման իրականությամբ անհատին վերածում են <u>կոսմոպոլիտի</u>՝ հայրենասիրության զգացումից և ազգային ինքնությունից զուրկ, իր ժողովրդի շահերից կտրված ու օտարացված կենսաբանական էակի, որը զերծ է ցանկացած տեսակի պարտականություն-պատասխանատվությունից, և ամենից առաջ՝ հայրենիքի ու ազգի հանդեպ։

Հոգևոր կյանքի վրա լուրջ սպառնալիք է ԶԼՄ-ների ազդեցությունը։ Զանգվածային լրատվամիջոցները, որոնք գործում են բացառապես արևմտյան քարոզչամեքենաների կամարտահայտությամբ, հիմք են դնում ապարժեքության ու տեղեկատվական աղբի տարածմանը։ Հարկ է նշել, որ Հայաստանը, վերջին տասնամյակներում բացել է իր սահմանները ամեն տեսակ գործակալական ցանցերի, հիմնադրամների, ՀԿ-ների առաջ, որոնք անվերահսկելի կերպով կլանել են ողջ համակարգը։ Հայաստանում գործող լրատվամիջոցների զգալի մասը, «Լրագրողների հանրային ակումբ»-ը և այլն ֆինանսավորվում են արևմուտքից՝ «Բաց հասարակության» (Սորոսի) կողմից։ Նման պարագայում ազգային ու իրապես հայկական, ոգեղեն-գաղափարական խմորումները,դրսևորումները և իրադարձությունները դատապարտված են տեղեկատվական բլոկադայի։ Այս ամենի անտեսումով էլ հասարակությանը դեգրադացնում են՝ խթանելով արևմտյան զանգվածային մշակույթի տարածմանը, անհատական, սպառողական վարքագծի ձևավորմանը։ Փոխում են ավանդական մտածելակերպը հավաքական արժեքների վերաբերյալ, ընթանում է հոգևոր արժեքների արժեզրկում, արևմտյան զանգվածային մշակույթի ձևանմուշների՝ ֆեմինիզմի, ԼԳԲՏ-համայնքի նկատմամբ հանդուրժողականության (ընդունման), գեդոնիզմի՝ հաճույքամոլության քարոզչություն։ Այս

ամենի հետևանքով դիտարկվում է հայ բնակչության հոգևոր, բարոյական և ստեղծագործական ներուժի նվազում, հասարակական կյանքի հոգևոր, տնտեսական և քաղաքական ոլորտների կախվածություն՝ արտասահմանյան տեղեկատվական ցանցերից: Նման դրույթները չարորակ ուռուցքի, վիրուսի նման ներթափանցում ու ախտահարում են այն իմունային համակարգը, որը մեր գոյութենական կարևորագույն երաշխիքներից է: Հետևապես, հասարակությունը որպես մեկ ամբողջական օրգանիզմ, այլևս կորցնում է իր օրգան-համակարգերի հետ լիարժեք կապն ու փոխգործակցությունը:

2.2. ԳՈՅԱԱՐԺԵՔԱՅԻՆ ԱՐԱՐՉԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՍՑԵՆԱՐ

Ուսումնասիրելով ծավալվող սպառված քաղաքական, իրավական, գիտական, կրթական, մշակութային և այլ շաբլոնները՝ ձևանմուշներն ու կարծրատիպերը՝ հանգրվանում ենք, որ մենք պետք է կայացնենք մեր սեփական գոյաարժեքային մոդելը և դրանից բխող հասարակական կյանքը կազմակերպող ու սպասարկող մնացած բոլոր ոլորտները: Մեր ընտրության լիագումարով էլ պայմանավորված կլինի ապագան, որը ենթադրում է էվոլյուցիոն զարգացում՝ հոգևոր դարձից ու ոգենորոգչական դարաշրջանից սկսած մինչև Բարեշրջության Արարչակրթական Բյուրաշրջանի հաստատում: Վերջիններս իրենց հոլոգրաֆիկ արտացոլանքն են գտնելու անձնային-անհատական, հասարակական-համակեցական, պետական-ազգակեցական ողջ կենսիմաստի ու կենսափիլիսոփայության, կենսաքաղաքականության ու կենսագործունեության մեջ: Նշենք, որ կիրառված յուրաքանչյուր տերմին ունի իր խորքային էութենական-իմացաբանական նկարագիրը: (Ելնելով թեմայի ընդգրկունությունից՝ դրա լուսաբանումը մեր հետազոտական ուղղությունից դուրս կթողնենք):

Մարդկության ապագան նրա հոգևոր-վերաճային տրամաբանության մեջ է, որը հնարավոր է միայն համապատասխան ոլորտների էվոլուցիայի շնորհիվ, իսկ դա պարտադրում է նոր՝ **ոգենորոգչական շարժում՝** հստակ նպատակադրման և կենսընթացի միջոցով:[22] Վերջինիս պարագայում, որպես ջահակիր պետք է հանդես գա

[22] Ներսիսյան Արմեն, Մակարյան Էդգար, Արարչական կենսականոնագիր, Գյումրի, 2022, էջ-231

Հայկական քաղաքակրթությունը և նրա առաքելության իրացմամբ շարժվող երիտասարդությունը։

Սահմանենք, որ ոգենորոգչական դարաշրջանի մեկնարկի համար պետք է ստեղծվի դրան համապատասխանող ու ծառայող համակեցական-հասարակական կյանքը կառավարող ինսիտուտները։ Քանզի այն համընդգրկուն է և վերաբերում է ինչպես ընդհանուրին, այնպես էլ ամբողջի մասին։ Հայության կենսագոյության բազմահազարամյա պատմության ընթացքում ինքնության պահպանման ֆունդամենտալ հիմքն են ծառայել՝ հայոց հավատամքը, հայ առաքելական եկեղեցին, հայոց լեզուն, ավանդական հայկական ընտանիքը, ազգային պատմությունն ու մշակույթը։ Ոգենորոգչությանն ու Արարչի Կամքի ճանաչման ներկաարարմանն են ծառայելու կրթությունը, գիտությունը, մշակույթը, ժամանակակից տեխնոլոգիաները, ԶԼՄ-ները և հասարակական կյանքը կազմակերպող այլ ոլորտներ ու կառույցներ։

Ստորև ներկայացնում ենք հոգևոր դարձին, ոգենորոգչությանը ծառայող հայեցակարգային մոտեցումների մեր տեսլականը։

Եկեղեցին՝ ոգենորոգչական կենսագործունեության համատեքստում։ Ազգային աշխարհաքաղաքական ներուժի կենսունակությունն ապահովելու տեսանկյունից եկեղեցին հանդես է գալիս՝ որպես կարևորագույն դերակակատար և միաժամանակ անդրազգային կազմակերպությունների գլխավոր թիրախը՝ որոնց վերջնանպատակը՝ տարածքի ու բնակչության տոտալ վերահսկողությունն է։ Ստեղծված ապամարդկային ու խառնիճաղանջ իրականությունում հայության վերածննդի և վերազարթոնքի միակ երաշխիքը կարող է լինել հայոց եկեղեցին։ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին է այն տապանը, որը հազարամյակների տառապանքի բովով անցնելիս չի կորցրել իր անաղարտությունը և նախասահմանված արդարարժեք ուղին։

Հայաստանը բռնազավթած իշխանությունների հակաեկեղեցական քաղաքականությունը և պարտադրված կարգավիճակը, որով ՀԱԵ-ն ստորադասվում է սոսկ կրոնական կառույցի, նունն է թե Հայաստանում գործող աղանդների կարգավիճակի, որը լրջագույն սպառնալիք է մեր ազգային քաղաքակրթական ընթացքին։ Ազգային եկեղեցու ուծացումը կհանգեցնի ազգային անվտանգության վերջնական կազմաքանդմանը։ Երբ 44-օրյա պատերազմի ընթացքում Շուշիի Ղազանչեցոց եկեղեցին կրկնակի թիրախավորվեց նույն կետում, դա ցույց տվեց, որ հայության

դեմ ագրեսիայի ամենամեծ թիրախը Եկեղեցին է, որովհետև այն վերջին ինստիտուցիոնալ կառույցն է, որ պահպանում է մեր էթնոսի հավաքական կերպարը: Այս համատեքստում կարող ենք հստակ ամրագրել, որ դարի մարտահրավերներին ու սպառնալիքներին դիմակայելու համար անհրաժեշտ է վերականգնել՝ ազգային կառավարման համակարգը՝ ազգային-պետական կյանքի կազմակերպման և կառավարման գործում եկեղեցու անմիջական ներգրավվածությամբ,ակտիվ մասնակցությամբ և հոգևոր առաջնորդությամբ: : Սակայն նրա սուղ ռեսուրսները թույլ չեն տալիս ակտիվ քայլեր ձեռնարկել: Ուստի անհրաժեշտ է, որ դեռևս անկախ ու ինքնուրույն ազգային ուժերը, որոնք դիմադրում են ներքին ու արտաքին դավադրություններին, համախմբվեն և մոբիլիզացվեն եկեղեցու շուրջ, որով և հիմք կդրվի ազգային կառավարման համակարգին ու ազգային պետության հիմնադրմանը: Փոխադարձ ՀԱԵ-ն պետք է ճանաչի մոբիլիզացիոն շարժման անհրաժեշտությունը, իր օրհնությամբ մեկնարկի, և լեգիտիմացնի, իր գլխավորությամբ առաջնորդի ու կայացնի այն:

Մշակութացում՝ ոգենորոգչական կենսագործունեության համատեքստում:

Անհրաժեշտ է մշակել ՀՀ պետական նոր քաղաքականություն, որը պետք է նպատակաուղղված լինի գերշահույթի մերժմանը՝ ապահովելով «բարեգործության» սկզբունքից անցումը «համագործակցության» սկզբունքի: Զուգահեռաբար նոր սերնդի սոցիալականացումը պետք է ուղեկցվի պատմական հիշողության վերաիմաստավորմամբ և անվտանգության պատմական անցյալի օբյեկտիվ գնահատմամբ: Այլ կերպ ասած՝ հոգևոր անվտանգության ապահովումը ներառում է ինքնաճանաչողություն, հասարակական-քաղաքական երևույթները փոխադարձ կապի մեջ ընկալելու և համակեցությունը պահպանելու ունակություն, ինչպես նաև «Ես»-ի նյութականի և հոգեմտավորի փոխներդաշնակման միջոցով ազգային արժեքների մրցունակությունը բարձրացնելու կարողություն:

Առաջարկվում է ՀՀ-ի հոգևոր անվտանգության ապահովման հիմքում դնել նոր հումանիզմը, համաձայն որի՝ հոգևոր անվտանգությունը պետք է իրականացվի համագործակցության մշակույթի զարգացման, գերշահույթի և մենաշնորհի մերժման միջոցով: Հոգևոր անվտանգության ապահովման քաղաքականության երիտասարդության քաղաքական սոցիալականացման

արդյունավետությունը ուղիղ համեմատական է «Մենք»—«Նրանք» ցանցային հաղորդակցման միջոցով սոցիալ-քաղաքական արդիականացմանը և ազգային մրցունակության մեծացմանը: Այս դիտանկյունից անհրաժեշտ է ապահովել Հայաստանի Հանրապետության, Սփյուռքի և Արցախի Հանրապետության հայության միասնականությունը[23]:

Մեր համակարգում կայանալու է պատասխանատվություն-վաստակ-իրավունք՝ ազատություն-արդարություն-հավասարություն ամբողջականությամբ:

Արարչաարժեգիտակրթահամակարգը՝ ոգենորոգչական կենսագործունեության համատեքստում

Բնական է, որ նման հոգևոր, բարոյական և արժեբանական նկարագրով հասարակություն ծնելու (դաստիրակելու) համար պետք է ապահովել նաև կերտվող ժամանակաշրջանի շնչին համապատասխան արարչաարժեգիտակրթահամակարգով: Ավելորդ է անգամ ասել, որ ՀՀ-ում գործող օտարածին՝ բոլոնյան կրթական համակարգը որևէ աղերս չունի մեր ազգային էության հետ և բացի այդ չի ապահովում ժամանակի պահանջներին համապատասխան մրցունակ կրթություն: Հետևապես, որպես ոգենորոգչական մեկնակետ կարող ենք սահմանել վերին էությունից ծնված, մեր ազգային նկարագրին համապատասխանող նոր կրթական համակարգի կառուցակազմումը: Ըստ մեր տեսակետի այն կայանալու է **«Հոգևոր Հայաստան»** գիտակրթական-քաղաքակրթական նախագծի միջոցով: Վերջինիս գլխավոր նպատակն է, պարզունակ, նյութականացված, խայտաբղետ ուսումնակրթական տոնավաճառում ստեղծել սեփական ազգային-գիտակրթական նախագիծը, որը հասանելի կլինի աշխարհի ցանկացած կետում, և հնարավորություն կտա, ապագա սերունդներին կրթել և դաստիարակել արդիականացված հայկական ազգային քաղաքակրթական առելքությանը բնորոշ: Իսկ նախագծի գործնական իրացումը հնարավոր է, ինչպես հանրակրթական համակարգում՝ նախադպրոցական, դպրոցական ու բուհական համակարգի ուսումնադաստիարակչական գործընթացի

[23] Մարգարյան Մ. «Երիտասարդության քաղաքական սոցիլականացումը՝ որպես ազգային ինքնության արդիականացման գործընթաց: Հոգևոր անվտանգություն», «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, 2018 թ 3(97) համարում, 66-79 էջ:

կազմակերպմամբ, այնպես էլ վիրտուալ տիրույթում՝ որպես անկախ, ազգային գիտակրթական նախագիծ:[24]

Տեղեկատվական ցանցերը՝ ոգենորոգչական կենսագործունեության համատեքստում

Զանգվածային տեղեկատվական ցանցերի բացասական հետևանքներից խուսափելու և ազգային արժեքներով ու գաղափարներով առաջնորդվելու հնարավորություն կարող է ստեղծվել զուտ ազգային տեղեկատվական հարթակի ձևավորմամբ: Նման փորձ առկա է **Մեծ Հայք տեղեկատվական համակարգում** և վերջինիս հարթակում գործող ՄիտանիՔ[25] ազգային սոցիալական ցանցում:

Ժամանակի պահանջներին համահունչ մենք պետք է կայացնենք մեր սեփական ռազմավարական գործիքը՝ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՎԱՔԱԿԱՆ ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ: Այն կազմված է լինելու առավելապես հայկական հոգևոր ժառանգության ֆիլտրված բովանդակությունից և արդիական գործիքակազմերից՝ կատաղի գլոբալիզմից ու ագրեսիվ նեոլիբերալիզմի կեղծիքներից պաշտպանվելու համար: Արդյունքում մենք ստանալու ենք բազմաֆունկցիոնալ գործիք, որը բացառիկ հնարավորություն է տալու անսահմանափակ արհեստական՝ մեքենայական ռեսուրսների, որոնք օգտագործվելու են բոլոր բնագավառներում՝ սկսած ռազմականից մինչև մշակութային: Նշենք որ Ազգային Արագացման Հանրային Ծառայության կողմից արդեն իսկ գործարկվել է ձայնի սինթեզ, խոսքի ճանաչում, մեքենայական թարգմանություն և տարաբնույթ ռոբոտացված համակարգեր ու գործառույթներ[26]:

Մենք այս ճանապարհով ի զորու ենք լինելու լուծելու մեր պատմության ամենացավոտ՝ ռեսուրսների սղության ու անբավարարության հարցը և թևակոխել անխափան վերելքի և հզորության ուղի:

ՁԼՄ-ները՝ ոգենորոգչական կենսընթացի համատեքստում

---

[24] Մարկոսյան Գ. «Հոգևոր Հայաստան կենսագաղափարի գիտակրթական բովանդակությունը՝ որպես ապագայի կրթության ճարտարապետում», Գյումրի 2023թ, էջ 22:

[25] https://mitani.am/

[26] https://hayq.ican24.net/tts/index.php?fbclid=IwAR2COgk7xpzUmkFpkI7EXs-d9b_kCkXkJvsPMdaAy1aRKrTWjJB3A_x25nI

ԶԼՄ-ների քայքայիչ, կործանիչ ազդեցությունից խուսափելու համար առաջարկվում է ստեղծել սեփական տեղեկատվական-հաղորդակցական, լրատվական ցանցը, որը կմաքրի տեղեկատվական աղբը և հայ հանրությանը կմատուցի սեփական քաղաքակրթական առաքելությանը անհրաժեշտ ոգեղեն ու ոգենորոգչական, իրական արժեթեր։

Հանրագումարենք. մեզ անհրաժեշտ է ազատվել առօրեական մաղձից ու ոգեփոխվել, ձգտել ոգեղեն կատարելագործման՝ հասնել կատարսիսի։ Իսկ դա հնարավոր է առաքելական հավատքի, հայոց լեզվի ու պատմական անցյալի վերարժևորմամբ, մշակութային ժառանգության պահպանմամբ ու արդիականացմամբ, դրա շարունակականության ապահովմամբ ու փոխանցմամբ։

ՎԵՐՋԱԲԱՆ

Հետազոտության ամփոփումը կարելի է ներկայացնել ներքոհիշյալ եզրակացությունների և առաջարկությունների միջոցով.

1. Ազգային անվտանգության ապահովման համատեքստում առանցքային նշանակություն ունի հոգևոր անվտանգությունը։ Հոգևոր անվտանգությունը՝ օբյեկտիվ իրականության և սուբյեկտիվ գիտակցության մեջ գոյություն ունեցող համակարգ է, որն արտահայտվում է ազգային ինքնագիտակցության արժեհամակարգային ու արժեգոյաբանական ինքնահիրացումով, հիմք հանդիսանալով հասարակության առողջ բարոյահոգեբանական զարգացման ու ստեղծարար համագործակցության համար։

2. Հոգևոր անվտանգությունը ներկայանում է որպես ֆունկցիա կախված համակարգաստեղծ բաղադրիչներից, դրանցից յուրաքանչյուրը ունի իր ուրույն տեղն ու դերը տարածաժամանակային հստակ արտահայտմամբ։ Քանի որ բանաձևում արգումենտների արտադրյալ է ներկայացված, ապա դրանցից մեկի զրոյական արժեքը հանգեցնում է ընդհանուր արտադրյալի զրոյացմանը։ Հաջորդ փոխկախվածությունն արտահայտվում է ֆունկցիայի համակարգաստեղծ արժեքների մեծությամբ։

3. Ազգային ներուժի կենսունակությունն ապահովելու տեսանկյունից եկեղեցին հանդես է գալիս, որպես կարևորագույն ակտոր։ Հայ Առաքելական հավատքից դուրս ցանկացած այլ դավանաբանական ձև կարող է, ոչ միայն խաթարել համակեցության լիարժեքությանն անհրաժեշտ մտածելակերպի և կենցաղավարության հիմքերը, այլև զրկել քաղաքակրթական ինքնատիպությունից։

4. Հայաստանի ազգային, ռազմական և հոգևոր անվտանգությանը համար լրջագույն սպառնալիք են հանդիսանում աղանդները։ Աղանդները հանդիսանում են քաղաքական անկլավներ պետության ներսում։ Վեջիններս որպես հոգեորսության թիրախ օգտագործում են հասարակության առավել խոցելի խմբերին, հաշվի առնելով ազգային ինքնագիտակցության ցածր մակարդակը, կրոնի, պետության և ազգի գոյատևման գաղափարների մասամբ կամ բացարձակ անտեղյակությունը։

5. Հոգևոր անվտանգությանը սպառնացող կրոնական կազմակերպությունների առաջխաղացումը կանխելու համար առաջարկվում է օրենսդրական հիմք ձևավորել, որոնք նախ թույլ

կտան լուրջ մոնիթորինգի ենթարկել այդ կազմակերպությունների գործունեությունը, իսկ վտանգի փաստման դեպքում հնարավորություն կստեղծեն արգելել նրանց գործունեությունը:

6. Հակաարարչական համակարգի սպառված ձևանմուշների ընդօրինակման հետևանքով հասարակության մեջ արմատացել է ոգեղեն-գաղափարական սնանկություն, տգիտություն, հոգևորի մերժում ու Աստվածային նախասահմանված ուղղու խեղաթյուրում: Որպես արարչական համակարգի կրող մենք պետք է կայացնենք մեր սեփական գոյաարժեքային մոդելը և դրանից բխող հասարակական կյանքը կազմակերպող ու սպասարկող մնացած բոլոր ոլորտները:

7. Արարչական և հակաարարչական համակարգերի միջև ընտրության արժեուղենիշ է սահմանվելու՝ պետություն - եկեղեցի - երիտասարդություն եռահամագործակցությունը: Անհրաժեշտ է ձևավորել նոր սերնդի էլիտա, որը սեփական քաղաքակրթական գաղափարախոսությամբ կապահովի մեր Ազգային ինքնության բնականոն արդիականացումն ու զարգացումը, հզորացումն ու անվտանգ ռազմավարական ապագայի կայացումը հիմք հանդիսանալով, Նոր Արդար աշխարհակարգի ստեղծման համար:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա. Մենագրություններ, հոդվածներ

1) Այվազյան Հովհաննես, «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Հայկական հանրագիտարան հրատ., Երևան, 1200 էջ:

2) Կագինյան Սիմոն «Ցիտատներ մոլոկանների մասին»-2014 թ.

3) Կիրակոսյան Ասյա, Հոգևոր անվտանգության սպառնալիքները ազգային անվտագության համատեքստում, ԱրՊՀ ուսանողական գիտաժողով, 2023թ:

4) Ղևոնդ քահանա Մայիլյան, Ժամանակակից աղանդները Հայաստանում, Էջմիածին, 1999, 121 էջ:

5) Մարգարյան Մ. «Երիտասարդության քաղաքական սոցիլականացումը՝ որպես ազգային ինքնության արդիականացման գործընթաց: Հոգևոր անվտանգություն», «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, 2018 թ 3(97) համարում, 66-79 էջ:

6) Մարգարյան Մարիամ, Մովսիսյան Մարինե, Հոգևոր անվտանգությունը՝ որպես ազգային և քաղաքացիաիրավական ինքնության փոխհարաբերությունների գործոն, Էջմիածին, 2021թ, 72-88 էջ:

7) Մարկոսյան Գոհար, «Հոգևոր Հայաստան կենսագաղափարի գիտակրթական բովանդակությունը՝ որպես ապագայի կրթության ճարտարապետում», Գյումրի 2023թ, 42 էջ:

8) Ներսիսյան Արմեն, Մակարյան Էդգար Արարչական Կենսականոնագիր, Գյումրի, 2022, 246 էջ:

9) Ներսիսյան Արմեն, Քաղաքակրթությունների աշխարհագրական տեսություն: Հայկական քաղաքակրթության աշխարհագրական հիմքերը, Գյումրի 2022, 312 էջ:

10) Ներսիսյան Արմեն, Հայաստանը աշխարհաքաղքական մեծ խաղատախտականում, Վանաձոր «ՍԻՄ» տպագրատուն ՍՊԸ, 2013 թ, 320 էջ:

11) Չիլինգարյան Դ.Ս, Երզնկյան Ե.Լ., Պաշտպանական-անվտանգային տերմինների բացատրական հայերեն-ռուսերեն-անգլերեն, ռուսերեն-հայերեն, անգլերեն-հայերեն մեծ բառարան, Երևան, 2015,

12) Дворкин А. Л. Сектоведение. Тоталитарные секты. Опыт систематического исследования. — М.: Христианская библиотека, 2007. — 816 стр.

13) Зеркалов Д. В., Духовная безопасность, Киев, 2012, 1121 стр7

14) Рыбаков Н.С., Безопасность как защищенность // Проблемы национальной безопасности России в XX – XXI вв. Уроки истории и

вызовы современности: материалы международной научно-практической конференции. Краснодар, 2010. 414 стр.
15) Серебрянников В., Дерюгин Ю., Ефимов Н., Ковалев В., Безопасность России и армия. М. 1995 63 стр.

Բ. Էլեկտրոնային աղբյուրներ

1) https://cyberleninka.ru/article/n/duhovnaya-bezopasnost-v-sovremennom-rossiyskom-obschestve-nekotorye-teoreticheskie-i-prakticheskie-aspekty/viewer (Հասանելի է՝ 09.06.2023)
2) https://ter-hambardzum.net/ehovayi-vkaner-petuthyun-mshakuyth-azgayin-ev-avandakan-arzhekhner/#:~:text=%D4%B5%D5%B0%D5%B8%D5%BE%D5%A1%D5%B5%D5%AB%20%D5%BE%D5%AF%D5%A1%D5%B6%D5%A5%D6%80%D5%A8%2C%20%D5%A3%D5%BF%D5%B6%D5%BE%D5%A5%D5%AC%D5%B8%D5%BE,%D5%B8%D5%B2%D5%BB%20%D5%A3%D5%A1%D5%B2%D5%A1%D6%83%D5%A1%D6%80%D5%A1%D5%AD%D5%B8%D5%BD%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6%20%D5%B6%D5%B4%D5%A1%D5%B6%D6%89 (Հասանելի է՝ 10.06.2023)
3) https://www.aravot.am/2014/01/21/424352/ (Հասանելի է՝ 23.08.2023)
4) https://www.arlis.am/documentview.aspx?docid=82&fbclid=IwAR3NaALW5Y_n83CoH-mYwVclXTpuO27Zrgyxw4W9joDYJnbEhu3aIZAA2fo (Հասանելի է՝ 23.08.2023)
5) https://www.google.com/amp/s/armeniasputnik.am/amp/201803 (Հասանելի է՝ 23.08.2023)
6) 11021267.htmlhttps://www.1in.am/205855.html (Հասանելի է՝ 23.07.2023)
7) https://www.aravot.am/2014/01/21/424352/ (Հասանելի է՝ 23.08.2023)
8) https://www.google.com/url?sa=t&source=web&rct=j&url=https://www.gov.am/u_files/file/kron/Tsutsak2-%2520herakhos-new.pdf&ved=2ahUKEwiEtLzd1Pn5AhVgQPEDHW_EAHEQFnoECAwQAQ&usg=AOvVaw0uNOlHY5zwo6ocq6lj5lG0 (Հասանելի է՝ 11.05.2023)
9) https://www.aravot.am/2014/01/21/424352/ (Հասանելի է՝ 11.05.2023)
10) https://tert.nla.am/archive/NLA%20TERT/Christonya%20Hayastan/krist-2014-08-1.pdf

(Հասանելի է՝ 08.07.2023)
11) https://armenpress.am/arm/news/1091430.html
(Հասանելի է՝ 11.08.2023)
12) https://hayq.ican24.net/tts/index.php?fbclid=IwAR2COgk7xpzUmkFpkI7EXs-d9b_kCkXkJvsPMdaAy1aRKrTWjJB3A_x25nI
(Հասանելի է՝ 05.08.2023)
13) https://mitani.am/
(Հասանելի է՝ 06.09.2023)

ԱՍՅԱ ԺԻՐԱՅՐԻ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

Ծնվել է 11.05.2002թ. գյուղ Կամոյում: 2020թ-ին ավարտել է Կամոյի միջն. դպրոցը: 2020թ-ին ընդունվել է Շիրակի պետական համալսարանի բնագիտամաթեմատիկական ֆակուլտետը՝ զբոսաշրջություն բաժին: Սկսած 2022 թ-ից «Ազգային Կառավարիչների Վիրտուալ Ակադեմիա»-ի ազգընկալ մակարդակի հետազոտող: Գիտական հետաքրքրությունների բնագավառներեն են՝ հասարակական, քաղաքական աշխարհագրության տեսական ու մեթոդաբանական ուղղությունները: Հետազոտական հիմնական ուղղություններն են՝ հոգևոր անվտանգության և ազգային անվտանգության սպառնալիքները: Հեղինակ է 3 գիտական հոդվածների: